



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. մայիսին /վերլուծություն/

2011թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16643 գործարքներ, որոնց քանակը 2011թ. ապրիլի համեմատ աճել է 2.0%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ՝ 23.1%-ով:

2011թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4065 օտարման գործարքների 79.6%-ը կազմել են առուվաճառքները, 19.5%-ը՝ նվիրատվությունները և 1.0%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.1%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. մայիսին, 2011թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 1.5%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ՝ 21.7%-ով:

2011թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. մայիսին, 2011թ. ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.9%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ աճել՝ 30.4%-ով:

2011թ. մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2010թ.	մայիս 2011թ.	ապրիլ 2011թ.
Կենտրոն	469500	443900	447300
Արաբկիր	392200	342500	347400
Քանաքեռ-Զեյթուն	289700	264300	264200
Նոր-Նորք	244700	226700	225700
Ավան	247900	235500	232200
Էրեբունի	252600	231900	235400
Ծենցավիթ	262100	231400	230800
Դավթաշեն	280400	258200	252000
Աջափնյակ	242300	227700	222000
Մալաթիա-Սեբաստիա	251200	222900	221900
Նուբարաշեն	145900	147000	149500
<b>Միջինը Երևանում /բազի Նորք-մարաշից/</b>	<b>279900</b>	<b>257500</b>	<b>257100</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. մայիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. ապրիլի համեմատ, աճել են 0.2%-ով:

2011թ. մայիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 315 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. ապրիլի համեմատ, աճել է 1.3%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ՝ 14.1%-ով:

2011թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2010թ.	մայիս 2011թ.	ապրիլ 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	142700	129700	132400
	Ապարան	45400	49500	47400
	Թալին	53400	61100	58315
Արարատ	Արտաշատ	95700	98400	93700
	Մասիս	133900	121000	128200
	Վեդի	95500	93000	89900
	Արարատ	84700	80200	81300
Արմավիր	Վաղարշապատ	165800	140800	146000
	Արմավիր	122500	121800	121800
	Մեծամոր	84900	84450	84100
Գեղարքունիք	Սևան	95600	91990	89360
	Գավառ	47300	49600	49600
	Մարտունի	86200	89500	89500
	Վարդենիս	33200	34700	34700
	Ճամբարակ	19700	22200	23100

Լոռի	Վանաձոր	95200	90300	93600
	Ստեփանավան	58200	67200	64300
	Սպիտակ	80700	87300	83200
	Ալավերդի	32000	36500	36300
	Տաշիր	36100	42100	39300
	Թումանյան	6100	12500	12500
	Շամլուղ	3400	8000	7700
	Ախթալա	14200	18600	17800
Կոտայք	Աբովյան	162400	138200	141800
	Նոր Հաճն	129700	123200	125300
	Բյուրեղավան	105100	107500	105600
	Եղվարդ	115900	102700	105500
	Հրազդան	63800	57800	58800
	Ծաղկաձոր	181500	185200	184400
	Չարենցավան	80000	73200	75500
Շիրակ	Գյումրի	120800	105700	108100
	Արթիկ	60600	64200	62900
	Մարալիկ	30800	33800	32100
Սյունիք	Գորիս	139600	126000	130600
	Կապան	100000	104200	104700
	Սիսիան	80500	90200	86400
	Մեղրի	58700	67700	65500
	Ագարակ	33500	38500	36500
	Քաջարան	59600	67300	65200
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	72300	79400	76700
	Եղնիզաձոր	106800	108000	108000
	Ջերմուկ	114000	121100	125200
Տավուշ	Դիլիջան	104300	106400	106600
	Իջևան	140600	128300	130400
	Բերդ	42200	48200	46200
	Նոյեմբերյան	33900	39100	37700
	Այրում	24100	27200	26200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. ապրիլի համեմատ, աճել են 0.1%-ով:

2011թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 462 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 125, մարզերում միասին վերցրած՝ 337: 2011թ. մայիսին, 2011թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.4%-ով, ընդ որում Երևանում՝ 6.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 2.1%-ով: 2010թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 35.9%-ով, ընդ որում Երևանում՝ 31.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 37.6%-ով:

2011թ. մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2010թ.	մայիս 2011թ.	ապրիլ 2011թ.
Կենտրոն	487700	463500	467000
Արաբկիր	399200	372700	378000
Քանաքեռ Զեյթուն	294700	275500	275400
Նորք Մարաշ	287200	280400	278000

Ավան	251900	241600	238200
Էրևբունի	260300	239000	236800
Շենգավիթ	265900	241500	240900
Դավթաշեն	286100	271500	265000
Աջափնյակ	249400	240400	234400
Մալաթիա Սեբաստիա	253200	233000	231900
Նուբարաշեն	148400	148200	150700
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>289500</b>	<b>273400</b>	<b>272400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. մայիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. ապրիլի համեմատ, աճել են 0.4%-ով:

2011թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2010թ.	մայիս 2011թ.	ապրիլ 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	150200	133600	136400
	Ապարան	50400	50900	48800
	Թալին	56800	62200	59400
Արարատ	Արտաշատ	101700	104900	103700
	Մասիս	136900	124800	132200
	Վեդի	99700	95600	92400
Արարատ	Արարատ	93600	82500	83600
	Վաղարշապատ	170200	159200	163000
Արմավիր	Արմավիր	126500	125200	126200
	Սևան	98300	96000	93300
Գեղարքունիք	Գավառ	51200	50600	50600
	Մարտունի	90200	90300	90300
	Վարդենիս	35700	37800	36800
	Ճամբարակ	22100	24900	25900
	Վանաձոր	100700	99700	103300
Լոռի	Ստեփանավան	62600	67700	64800
	Սպիտակ	84400	94000	89600
	Ալավերդի	35700	37200	37000
	Տաշիր	39800	45500	43700
	Թումանյան	10700	12900	12900
	Շամլուղ	7500	9300	9000
	Ախթալա	18200	19600	18800
	Արսիկ	173200	145600	149400
Կոտայք	Նոր Հաճն	136300	131200	133400
	Բյուրեղավան	109600	109300	107400
	Եղվարդ	128600	107900	110800
	Հրազդան	67600	62800	64900
	Ծաղկաձոր	312600	305000	310000
	Չարենցավան	82000	75000	77300
	Գյումրի	125600	116400	119000
Շիրակ	Արթիկ	63400	65200	63200
	Մարալիկ	33100	36200	34400

Սյունիք	Գորիս	145100	134300	139200
	Կապան	105300	106200	106700
	Սիսիան	85200	91000	87200
	Մեղրի	62100	68600	66400
	Ագարակ	35600	40000	36900
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	76300	80000	77300
	Եղեգնաձոր	115400	115000	115000
	Ջերմուկ	120800	122800	127000
Տավուշ	Դիլիջան	110700	107600	107800
	Իջևան	144700	137700	140000
	Բերդ	44700	49600	47500
	Նոյեմբերյան	36200	39600	38200
	Այրում	26000	27900	26900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. ապրիլի համեմատ, նվազել են 0.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. մայիսին հանրապետությունում օտարվել են 1411 միավոր /979.52 հա/ հողեր, որից Երևանում՝ 55 միավոր /81.10 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 726 միավոր /836.11 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.90 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 498 միավոր /45.00 հա/, որից Երևանում՝ 32 միավոր /2.79 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 161 միավոր /88.71 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /77.40 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 8 միավոր /0.77 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.01 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 9 միավոր /8.33 հա/ ,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 9 միավոր /0.60 հա/:

2011թ. մայիսին հանրապետությունում օտարված հողերից 1216 միավորի /888.31 հա/ նկատմամբ իրականացվել են առավաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 50 միավոր /78.84 հա/, նվիրատվության գործարքներ՝ 175 միավորի /83.63 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /2.25 հա/ և փոխանակության գործարքներ՝ 20 միավորի /7.59 հա/:

Հանրապետությունում 2011թ. մայիսին, 2010թ. մայիսի համեմատ, հողերի առավաճառքի գործարքների քանակն աճել է 11.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առավաճառքի գործարքների քանակն աճել է 28.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 1.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 11.1%-ով: Հողերի առավաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 210.01 հա, որից 205.66 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.9%-ը կամ 315 գործարքներ /210.63 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 7 գործարք /0.14 հա/, իսկ 72.9%-ը կամ 886 միավորը /676.03 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 41 միավոր /78.69 հա/: 2011թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 15 գործարք /1.64 հա/:

Ստորև ներկայացվում է 2011թ. մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առավաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող

տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/
Երևան	0	0.00	1	0.01	2	0.09	4	0.04	7	0.90	0	0.00	27	2.33	7	75.46
Արագածոտն	16	13.30	0	0.00	0	0.00	3	0.06	46	25.58	0	0.00	25	2.53	3	0.11
Արարատ	10	121.09	0	0.00	20	1.48	2	0.01	34	14.91	1	0.13	51	4.41	4	1.01
Արմավիր	7	12.08	3	0.53	1	0.03	10	0.06	39	193.58	0	0.00	38	3.61	3	0.13
Գեղարքունիք	1	2.10	0	0.00	18	2.12	8	1.96	54	64.38	0	0.00	12	1.25	3	0.48
Լոռի	1	0.21	1	0.06	4	0.09	13	0.29	174	135.76	0	0.00	32	4.14	4	0.33
Կոտայք	25	19.98	0	0.00	40	2.84	25	0.30	107	48.64	0	0.00	69	5.50	8	0.32
Շիրակ	0	0.00	0	0.00	21	1.04	14	0.16	29	63.96	1	0.04	13	2.04	1	0.01
Սյունիք	1	1.00	0	0.00	4	0.33	8	0.16	20	10.28	0	0.00	9	0.64	4	0.10
Վայոց Ձոր	7	25.64	0	0.00	1	0.04	8	0.41	17	6.56	0	0.00	4	0.36	1	0.03
Տավուշ	0	0.00	0	0.00	28	2.73	4	0.05	14	4.70	1	0.004	15	1.33	1	0.001
Ընդամենը	68	195.40	5	0.60	139	10.79	99	3.50	541	569.25	3	0.17	295	28.14	39	77.98

Ստորև ներկայացվում է 2011թ. մայիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	<b>Ուղղակի վաճառք</b>								<b>Աճուրդ վաճառք</b>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/	Միավոր	Մամբրներ /հա/		
Երևան	7	0.14	1	0.01	2	0.09	4	0.04	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	2	0.06	0	0.00	0	0.00	2	0.06	17	13.302	16	13.30	0	0.00	0	0.00	1	0.002
Արարատ	2	0.084	0	0.00	1	0.08	1	0.004	30	122.494	10	121.09	0	0.00	19	1.40	1	0.004
Արմավիր	4	0.03	1	0.01	0	0.00	3	0.02	16	12.47	6	11.88	2	0.52	1	0.03	7	0.04
Գեղարքունիք	3	0.65	0	0.00	0	0.00	3	0.65	24	5.52	1	2.10	0	0.00	18	2.12	5	1.30
Լոռի	2	0.05	0	0.00	2	0.05	0	0.00	17	0.61	1	0.21	1	0.06	2	0.05	13	0.29
Կոտայք	15	0.87	0	0.00	9	0.77	6	0.10	72	21.78	22	19.51	0	0.00	31	2.06	19	0.21
Շիրակ	11	0.48	0	0.00	7	0.45	4	0.03	24	0.72	0	0.00	0	0.00	14	0.59	10	0.13
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	1.49	1	1.00	0	0.00	4	0.33	8	0.16
Վայոց Ձոր	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	15	26.09	7	25.64	0	0.00	1	0.04	7	0.41
Տավուշ	2	0.021	0	0.00	1	0.02	1	0.001	30	2.77	0	0.00	0	0.00	27	2.72	3	0.05
Ընդամենը	49	2.39	2	0.02	22	1.46	25	0.91	258	207.25	64	194.73	3	0.58	117	9.34	74	2.60

Հանրապետությունում 2011թ. մայիսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /0.67 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. մայիսին, 2010թ. մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 27.1%-ով: Ընդ որում, Երևանում մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 27.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 22.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 24.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 33.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 50.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մամերնը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մամերնը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	15	12.53	62.5	1602.0	318.0	29	18.12	365.0	12000.0	4295.0
Ապարան						9	2.61	86.5	2727.3	625.5
Թալին	1	0.76	76.0	76.0	76.0	3	3.06	93.6	5494.5	567.2
Ծաղկահովիտ						3	1.27	79.5	1000.0	210.1
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						6	1.58	335.1	10833.3	2582.3
Մասիս	1	0.59	84.4	84.4	84.4	20	7.97	200.0	11904.8	2833.7
Վեդի	9	120.50	68.0	582.9	158.9	8	5.36	207.0	10795.1	1765.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	0.74	73.3	73.3	73.3	22	14.55	294.3	9090.0	1516.7
Բաղրամյան	2	5.11	70.9	72.2	71.6	3	2.70	90.6	2561.1	770.0
Վաղարշապատ	3	6.03	60.4	592.5	237.9	13	3.79	444.4	11764.7	2922.8
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						35	16.83	199.8	1875.0	370.9
Ճամբարակ								60.5	953.3	320.0
Մարտունի						10	1.80	51.1	2850.0	705.5
Սևան						6	38.36	52.2	2134.8	290.0
Վարդենիս	1	2.10	171.0	171.0	171.0	3	7.40	41.2	2575.1	385.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						9	4.75	170.4	6424.2	793.4
Գուգարք						10	1.89	234.6	6065.9	875.5
Սպիտակ								250.0	5555.5	685.4
Ստեփանավան	1	0.21	1163.3	1163.3	1163.3	6	2.77	90.6	1686.6	286.5
Տաշիր						146	124.38	45.3	1384.4	147.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	19	17.57	230.5	285.0	240.0	48	23.09	279.3	11942.7	4700.0
Եղվարդ	1	0.24	243.0	243.0	243.0	28	10.29	174.4	11971.8	3349.0
Հրազդան	2	1.70	178.3	227.5	202.9	11	5.16	130.5	10256.4	2050.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						7	8.08	252.0	1693.1	609.3
Ամասիա						3	10.09	40.9	261.0	135.8
Անի						3	4.01	110.6	546.9	358.6
Աշոցք						13	39.95	58.5	215.8	110.0
Արթիկ						3	1.83	79.4	1428.6	330.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						4	0.43	92.6	1023.2	623.0
Կապան								120.0	841.6	315.0
Մեղրի						2	0.41	193.0	3000.0	680.0
Սիսիան	1	1.00	165.0	165.0	165.0	14	9.45	46.3	1977.4	422.6
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեցնաձոր	7	25.64	63.0	629.8	191.7	6	1.81	125.0	10000.0	1785.5
Վայք						11	4.75	58.8	1430.7	552.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						8	2.09	213.3	3783.8	630.0
Իջևան						1	0.20	267.5	9454.5	1180.0
Նոյնմբերյան						5	2.41	46.7	7368.4	880.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնօրոգությունից և հողատնայնության:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						20	17414.5	130.7	22200.0	2572.0
Ապարան						2	2745.0	124.1	609.6	325.5
Թալին						2	4352.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						1	770.0	60.0	214.3	85.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						5	5420.0	173.9	7140.3	894.0
Մասիս	19	13980.0	1252.0	3252.5	1452.8	32	23474.0	187.5	25000.0	1212.3
Վեդի						14	15191.0	126.1	5000.0	662.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						13	9284.0	131.6	9090.9	1215.0
Բաղրամյան	1	281.0	161.8	161.8	161.8	1	1900.0	100.0	833.3	220.0
Վաղարշապատ						23	23873.0	197.4	26528.4	1530.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	16	19950.0	124.4	216.7	146.1	2	1927.0	186.6	1084.3	575.5
Ճամբարակ						1	800.0	71.3	2286.2	149.3
Մարտունի						8	9080.0	119.3	5000.0	275.9
Սևան	2	1200.0	502.6	521.9	512.3			240.0	3110.4	271.0
Վարդենիս								72.5	987.2	150.0
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի						3	5460.0	114.3	1388.9	215.3
Գուգարք	2	464.0	2009.7	3381.5	2695.6	3	1479.0	77.9	14083.3	960.0
Սպիտակ						23	30226.0	104.9	1348.3	200.0
Ստեփանավան								88.2	1666.7	172.6
Տաշիր						3	4210.0	45.3	400.0	87.2
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	17	9798.0	344.1	4976.8	3618.7	31	24422.2	264.5	35353.5	1970.2
Եղվարդ	14	10847.0	1254.6	3822.3	3625.8	30	23432.0	173.6	27000.0	2840.0
Հրազդան						8	7160.0	117.7	34848.5	1323.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	9	2412.0	2107.8	5250.0	3037.7	7	6403.5	113.6	18750.0	331.6
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	3	2700.0	233.1	465.0	310.4			67.9	180.6	148.6
Աշոցք						1	4390.0	40.8	144.0	60.0
Արթիկ	2	800.0	65.6	68.8	67.2	5	9560.0	111.8	5000.0	216.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	143.0	112.2	1700.0	366.5
Կապան						2	798.0	67.9	2638.9	280.0
Մեղրի	4	3318.0	283.9	296.4	290.4	3	3063.0	68.5	632.9	178.2
Սիսիան						3	2359.0	123.5	875.0	188.0



Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	400.0	752.5	752.5	752.5	4	3613.0	96.7	7659.6	497.2
Վայք								120.7	1448.3	192.3
Տավուշի մարզ										
Բերդ	3	3300.0	160.0	160.0	160.0	1	1800.0	75.8	810.0	102.0
Իջևան	22	23710.0	242.3	3000.0	1621.8	13	10504.0	74.1	14423.1	507.8
Նոյնեբերդյան	2	183.0	1100.0	1100.0	1100.0	1	1040.0	125.0	1948.1	205.5

2011թ. մայիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 12 գործարքներ 4.42 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ /0.18 հա/ Լոռու և 10-ը՝ /4.24 հա/ Տավուշի մարզերում:

2011թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 781 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 78.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. մայիսին, 2011թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 1.2%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ նվազել՝ 15.7%-ով:

2011թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 38 բնակարանների, 30 անհատական բնակելի տների, 374 հասարակական, 68 արտադրական նշանակության օբյեկտների, 263 միավոր /1941.76 հա/ հողերի և 8 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 23 վարձակալության գործարքների /այդ թվում 20 միավոր՝ 0.03 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. ապրիլի համեմատ աճել է 7.7 անգամ, իսկ 2010թ. մայիսի համեմատ՝ 21.0%-ով: 2011թ. մայիսին հանրապետությունում վարձակալված 1941.76 հա հողերից 0.70 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1941.06 հա հողերից 19.48 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 140.41 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 500.39 հա, որից 498.55 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. մայիսին հանրապետության մարզերում վարձակալվել են 1768.17 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. մայիսին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	10	104.69
Արարատ	23	498.55
Արմավիր	7	51.90
Գեղարքունիք	41	188.17
Լոռի	14	422.87
Կոտայք	13	451.92
Շիրակ	4	6.30
Սյունիք	13	11.83
Վայոց Ձոր	1	30.00
Տավուշ	3	1.94
<b>Ընդամենը</b>	<b>129</b>	<b>1768.17</b>

2011թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2587 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակը, 2011թ. ապրիլի համեմատ, աճել է 7.6%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ՝ 52.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.1%/, առանձնատների /27.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.9%/ և հողերի /11.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1099 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. ապրիլի համեմատ, աճել է 3.2%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ՝ 39.1%-ով:

2011թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 407.92 հա հողեր, որից 3.86 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 93.7%-ը կամ 382.04 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 178.68 հա, որից 178.02 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. մայիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 211 գործարքներ, որից 141-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 81.5%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 16.1%-ն՝ անհատական բնակելի տների, 0.5-ական%-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների ու այգետնակների և 1.4%-ը՝ հողերի նկատմամբ: 2011թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 2.3%-ով, ընդ որում Երևանում նվազել է 17.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 55.6%-ով: 2010թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 37.0%-ով, ընդ որում Երևանում՝ 22.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 79.5%-ով:

2011թ. մայիսին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2649 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. ապրիլի համեմատ նվազել է 12.1%-ով, իսկ 2010թ. մայիսի համեմատ աճել՝ 50.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /26.7%/:

### ***ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***